ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

1. **Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց ՀՀ Շիրակի մարզում ընդունման և տեղավորման, տրամադրված հումանիտար աջակցության ու կատարված այլ աշխատանքների մասին:**

Նոյեմբերի 15-ի դրությամբ Շիրակի մարզում ապաստան է գտել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 4148 քաղաքացի՝ 1050 ընտանիք:

Համայնքներում տեղաբաշխվածությունը հետևյալն է.

N	ՀԱՄԱՅՆՔ	ԱՆՁԱՆՑ ՔԱՆԱԿ	ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿ
1	Գյումրի	2851	703
2	Արթիկ	431	120
3	Աշոցք	93	19
4	Անի	295	82
5	Ամասիա	91	26
6	Ախուրյան	387	100
	Ընդամենը	4148	1050

- 14 քաղաքացի պետական աջակցությամբ ապաստանել է հյուրանոցներում և հյուրատներում:
- Պարբերաբար աշխատանքներ են տարվում ազատ առանձնատներ և բնակարաններ հայտնաբերելու ուղղությամբ, որպեսզի հնարավորինս արագ բեռնաթափվեն հյուրանոցները և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցները օր առաջ բնակություն հաստատեն առանձնատներում և բնակարաններում: Հոկտեմբերի 3-ի դրությամբ հյուրանոցներում և հյուրատներում տեղավորված անձանց թիվը կազմել է 591, նոյեմբերի 13-ի դրությամբ թիվը նվազել է՝ հասնելով 14-ի: 577քաղաքացի մեր աջակցությամբ տեղափոխվել են առանձնատներ և բնակարաններ:
- Այս պահին Շիրակի մարզի հյուրանոցներում և պետական համայնքային տարածքներում հիմնականում այն ընտանիքներն են, որոնք դժվարանում են վարձով բնակարան գտնել և տեղափոխվել, քանի որ ընտանիքի կազմը բաղկացած է 1 կամ 2 անձից և տրամադրված գումարը չի բավարարի տան վարձակալության համար:

- Կեցության համար հարմարեցված ընդհանուր տարածքներում տեղակայվել են բռնի տեղահանված 67 քաղաքացի. 26-ը Գյումրի բժշկական կենտրոնի մասնաշենքում, 33 (16 ընտ) Մարալիկի սոցիալական թաղամասում և 8-ը Լանջիկում:

- ՀՀ Շիրակի մարզի դպրոցներում ուսումը շարունակում է 687 աշակերտ:

- ՀՀ Շիրակի մարզի բուհերում ուսումը շարունակում է 45 ուսանող. 38-ը Շիրակի պետական համալսարանում, 2-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում, 5-ը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսրանի Գյումրու մասնաճյուղում:

- ՀՀ Շիրակի մարզի թվով 24 բուժհաստատություններում հաշվառվել, դեղորայք են ստացել, ստացիոնար բուժման և լաբորատոր-գործիքային հետազոտության են ուղեգրվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 2479 քաղաքացի:

- ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում ծննդաբերել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 5 կին, հաշվառվել է 23 հղի:

- Մարզի բուժհաստատություններում աշխատանքի է ընդունվել 5 բուժաշխատող, ևս 2-ը անցնում են փորձաշրջան:

- Շիրակի կրթական հաստատություններում աշխատանքի ընդունվելու հայտ է ներկայացրել 32 քաղաքացի, նրանց տվյալներն ուղարկվել են ԿԳՄՍ նախարարություն, որից աշխատանքի է ընդունվել 5-ը:

- Մարզում այս պահի դրությամբ ժամանակավոր և մշտական աշխատանքի է տեղավորվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 62 քաղաքացի, ինչպես նաև առաջարկվել է 71 թափուր աշխատատեղեր:

- Կառավարության թվով 4 որոշումներով Շիրակի մարզպետի աշխատակազմին հատկացվել է 170 մլն. դրամ, որից 80 մլն.-ը հյուրանոցային ծառայությունների, 70 մլն.-ը սննդին և 20 մլն.-ը այլ նպաստների (հրատապ օգնություն տրամադրելու) համար:

- 2023 թ. ի նոյեմբերի 15-ի դրությամբ փաստացի ծախսվել է շուրջ 155 մլն 327 հազար դրամ, որից շուրջ 75 մլն. 742 հազար դրամը հյուրանոցային ծառայությունների, շուրջ 68 մլն. 285

հազար դրամը սննդի և շուրջ 11 մլն. 300 հազար դրամը այլ նպաստների (հրատապ օգնություն տրամադրելու) համար:

- Նոյեմբերի 1-ի դրությամբ պետության ֆինանսավորմամբ չոր սնունդ է ստանցել 3445 քաղաքացի՝ ովքեր նշել են, որ սննդի կարիք ունեն. 2058-ը Գյումրիում, 142-ը Աշոցք, 409-ը Ախուրյան, 325-ը Անի, 412-ը Արթիկ և 99-ը Ամասիա խոշորացված համայնքներում:

- Կարծում եմ նույնիսկ ավելորդ է ներկայացնելը պետության կողմից Լեռնային Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցներին 100 000 ական միանվագ, 40+10 000 ական տան վարձավճարի և կոմունալ ծախսերի և 50 000 ական դրամ սննդի հումարի հատկացման մասին խոսելը:

- Պետության ֆինանսավորմամբ տաք և չոր սնունդ էր հատկացվում մեր հայրենակիցներին մինչև նոյեմբերի 1-ը: Այժմ շարունակվում է հումանիտար օգնության սննդի, հիգիենայի և կենցաղային պարագաների տրամադրումը՝ ըստ կարիքի գնահատման:

Մեծածավալ հումանիտար օգնություն է ստացվել Ռումինիայից, Լեհաստանից, Ավստրիայից, Ֆինլանդիայից, Լիտվայից, ՄԱԿ-ի պարենի ծրագրից՝ սնունդի, ծալովի մահճակալների, դաշտային մահճակալների, անկողնային պարագաների, քնապարկերի, հիգիենայի փաթեթների և այլ ապրանքների տեսքով, որոնք բաշխվել և բաշխվում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված մեր բարեկամներին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյան

2. ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատությունների կողմից Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց ցուցաբերված բժշկական օգնության և սպասարկման, վարչության աշխատակիցների կողմից նշված անձանց հրատապ կարիքների գնահատման աշխատանքների մասին:

ՀՀ Շիրակի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններում հաշվառվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 2479 անձ, որից 150 անձի տրամադրվել է անվճար դեղորայք, 46 անձի տրամադրվել է ստացիոնար բուժման ուղեգիր, 222 անձի տրամադրվել է լաբորատոր-գործիքային հետազոտության ուղեգիր:

«Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ-ի նախկին մասնաշենքում ժամանակավոր բնակվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 26 անձ:

ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում ծննդաբերել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 5 հղի (4 տղա, 1 աղջիկ), ներկայումս հաշվառված է 23 հղի:

ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում աշխատանքի է ընդունվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 5 անձ, 2-ը անցնում են փորձաշրջան:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Շիրակի մարզում ժամանակավոր բնակություն հաստատած 9 անձ ֆինանսական օգնության խնդրանքով դիմել է ՀՀ Շիրակի մարզպետին և ստացել դրական աջակցություն:

Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններից ամենօրյա ռեժիմով ներկայացվում է տեղեկատվություն կարիքների գնահատման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից իրականացվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 220 արցախահայ ընտանիքի 667 մարդու կարիքների գնահատում: Առանձնացվել են հետևյալ առաջնային կարիքները.

- Անկողնային պարագաներ/ վերմակ, բարձ, ներքնակ/, սպիտակեղեն, հիգիենայի պարագաներ, մանկական տակդիր, մանկական կեր, մահճակալ, տաք հագուստ, կոշիկ:
- Կենցաղային իրեր/ լվացքի մեքենա, սառնարան, փոշեկուլ, մսաղաց, ջեռոց, տաքացուցիչ, հեռուստացույց/
- Կահույք /զգեստապահարան, աթոռներ/:

Առաջնային կարիքների բավարարման համար արցախահայերը ուղղորդվել են պետության կողմից պատվիրակված ծառայություն մատուցող կազմակերպություններ՝ «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպություն, «Խաչմերուկ» հիմնադրամ, «Արևամանուկ» սոցիալ-հոգեբանական կենտրոն: Կանանց իրավունքների տուն ՀԿ-ի կողմից իրականացվել է սոցիալական խորհրդատվություն, տրամադրվել է հիգիենայի և անկողնային պարագաներ, մանկական տակդիր: Թվով 30 կանանց և աղջիկների համար ԿԻՏ-ի կողմից կազմակերպվել են գրաֆիկ դիզայն, սոցիալական մեդիա մարքեթինգ, /SMM/, վարսահարդարում, մատնահարդարում, դիմահարդարում, կարուձև, խոհարարություն, հրուշակագործություն մասնագիտություններով անվճար դասընթացներ: Մասնակիցներից 15 հոգուն կտրամադրվեն անվճար գործիքներ՝ տանից աշխատելու համար, մյուս 15-ին կօգնեն աշխատանքի տեղավորման հարցում: Կազմակերպության կողմից նախատեսվում է 45 և ավել ընտանիքների տրամադրել նոր գնված ձմեռային վերմակներ, ինչպես նաև կտրոններ՝ ձմեռային կոշիկներ, վերարկուներ և տաքացուցիչներ գնելու համար:

«Խաչմերուկ» հիմնադրամ ուղղորդված 220 ընտանիքի տրամադրվել է բրդյա ծածկոցներ, հիգիենիկ փաթեթներ, գրենական պիտույքների հավաքածու, սպասք, հագուստ, տակդիր:

«Արևամանուկ» սոցիալ-հոգեբանական կենտրոն ուղղորդված բազմազավակ երեխաներ ունեցող ընտանիքների համար իրականացվել են տնայցեր, կարիքների գնահատում, և հոգեբանական աջակցության տրամադրում: Կենտրոնի կողմից 15 ընտանիքի տրամադրվել է

հիգիենայի պարագաներ, գրենական պիտույքներ: Նախատեսվում է առաջիկայում ևս 11 ընտանիքի տրամադրել սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ:

Առաջնային կարիքների գնահատման ընթացքում բազմաթիվ անձինք կրթության շարունակականությունը ապահովելու նպատակով ուղղորդվել են ՇՊՀ, հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ: Հաշմանդամություն ունեցող անձինք ուղղորդվել են «Էմիլի Արեգակ» կենտրոն: Հոգեբանական ծառայությունների կարիք ունեցողներն ուղղորդվել են Հայ-ֆրանսիական հոգեբանական և սոցիալական կենտրոն:

Անձնագիր չունեցողները ուղղորդվել են ոստիկանության անձնագրային բաժիններ, հղի կանայք՝ պրոֆիլակտիկ կոնսուլտացիաների համար՝ բուժհաստատություններ, որոշ քաղաքացիներ՝ ատամնաբուժարան՝ անվճար ծառայություններից օգտվելու: Որոշ դեպքերում քաղաքացիների համար կարգավորվել է նաև աշխատանքի տեղավորման հարցը: ՀՀ Շիրակի մարզում բնակվող 21 հղի կանանց համար նախատեսվում է տրամադրել նորածինների համար անհրաժեշտ փաթեթ:

«Ֆյուր Արմենիեն» կազմակերպության հետ միասին 20 ընտանիքի տրամադրվել է մահճակալ անկողնային պարագաներով՝ վերմակ, բարձ, ներքնակ, սպիտակեղեն:

Լրացվել են ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց հաշվառման թերթիկները:

Արցախահայերի հետ աշխատանքները շարունակվում են:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի պարտականությունները կատարող՝ Լեյլի Ասլանյան

3. 2023 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման ընթացքի մասին:

023թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 89.7 %-ով, նախատեսված 4,159,862.6 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 3,733,159.7 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմել է – 426,703.0 հազ. դրամ: Մարզի համայնքների 2023թ. բյուջեների տաս ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի

Եկամուտների անվանումը	2023թ. նախատեսված սեփական	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %

	եկամուտներ			
Անշարժ գույքի հարկ	577,039.0	403,036.6	- 174,002.4	69.8
Գույքահարկ փոխադրամիջոցներից	1,268,609.9	1,032,099.8	- 236,510.1	81.4
Պետական տուրք	50,698.7	67,654.2	16,955.5	133.4
Տեղական տուրք	134,448.5	142,510.1	8,061.6	106.0
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	**338,718.6**	**272,436.9**	**- 66,281.7**	**80.4**
ա/ հողի վարձավճար	283,410.5	214,308.5	- 69,102.0	75.6
բ/ գույքի վարձավճար	55,308.2	58,128.4	2,820.2	105.1
Այլ եկամուտներ	1,790,347.9	1,815,422.0	25,074.2	101.4
Ընդամենը սեփական եկամուտներ	4,159,862.6	3,733,159.7	- 426,703.	89.7

4.

2023 թվականի տաս ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2022թ. համեմատությամբ կազմել է 54.8 %, գումարային արտահայտությամբ 1,321,992.0 հազ. դրամ՝ որից 951,106.3 հազ. դրամը «ՀՀ պետական բյուջեից աշնանացան ցորենի արտադրության պետական աջակցության ծրագրի փոխհատուցման նպատակով» մարզի համայնքերի բյուջեներին հատկացված գումար:

ՀՀ պետական բյուջեով մարզի համայնքներին 2023 թվականի տաս ամիսներին նախատեսված 5,829,192.6 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2023 թվականի տաս ամիսներին ՀՀ պետական բյուջեից մարզպետի աշխատակազմի ենթակա կազմակերպություններին նախատեսված ֆինանսավումը լրիվությամբ հատկացվել է

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Լիպարիտ Մարտիրոսյան

4. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 2023 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների մասին:

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 2023 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 32 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ամբողջական փաթեթ՝ 130 ենթածրագրերով, որից հաստատվել է 27 ծրագիր 108 ենթածրագրերով:

Ծրագրերի ընդհանուր նախահաշվային գումարը կազմում է **7 մլրդ 477 մլն դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում **3 մլրդ 895 մլն դրամ** (52%), համայնքի բյուջեի ֆոնդային մասը՝ **3 մլրդ 492 մլն դրամ** (46.8%) և այլ ներդրողներ **89 մլն դրամ** (1.2%):

Ըստ համայնքների (ծրագրեր են իրականացվում 42 բնակավայրում)

- Գյումրի համայնք՝ 7 ծրագիր (45 ենթածրագիր) 4 մլրդ 231 մլն դրամ արժողությամբ:
- Ախուրյան համայնք՝ 8 ծրագիր (24 ենթածրագիր) 1 մլրդ 491 մլն դրամ արժողությամբ:
- Արթիկ համայնք՝ 3 ծրագիր (23 ենթածրագիր) 733 մլն դրամ արժողությամբ:
- Անի համայնք՝ 2 ծրագիր (2 ենթածրագիր) 588 մլն դրամ արժողությամբ:
- Աշոցք համայնք՝ 4 ծրագիր (10 ենթածրագիր) 340 մլն դրամ արժողությամբ:
- Ամասիա համայնք՝ 2 ծրագիր (3 ենթածրագիր) 94 մլն դրամ արժողությամբ:

Ծրագրի ոլորտը	Ծրագրերի քանակ	Ծրագրի սկզբ. (հազ. դրամ)	Արդյունք
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	2	124,735,485	4.7 կմ, 2528 շահառու
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	1	119,496,880	400 հա, 85 տնային տնտեսություն
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում	4	3,303,319,511	15.2 կմ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	1	12,388,939	69 լուսակիր 1.9 կմ երկարությամբ
Բնակավայրերի գազաֆիկացում	6	785,644,552.0	39 կմ
Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում	3	1,106,515,862	856 երեխա
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	3	467,279,732	7991 քմ 2604 շահառու
Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում	4	1,326,412,000	45 մեքենաս.
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայն-քային կենտրոններ և այլն)	1	81,565,637	1 հատ, 490 քմ

կառուցում/վերանորոգում			
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1	149,992,879	4 հատ, 22201 քմ
Ընդամենը	26*	7,477,351	

* «Ախուրյան բնակավայրի մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրից համայնքը հրաժարվել է:

Վերոնշյալ 26 ծրագրերը գտնվում են.

- 7-ը՝ ավարտված:
- 12-ը՝ ընթացիկ փուլում (շինարարարություն կամ մատակարարում):
- 1-ը՝ համալիր փորձաքննության անցկացման փուլում:
- 1-ը՝ բողոքարկման պատճառով համաձայնագիր չի կնքվել:
- 5-ը՝ տեղափոխվելու է 2024 թվական:

2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1909-Ն ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման թիվ 2 հավելվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ.

- Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման նպատակով դիտարկվում են այն համայնքների հայտերը, որոնց նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը 90 տոկոս և ավելի է: Իսկ 90 տոկոսից ցածրի դեպքում՝ սուբվենցիայի հայտի դիտարկումը ենթակա է քննարկման միայն ներկայացնելով տեղեկանք-հիմնավորումներ նշված հարկատեսակների թերհավաքագրման պատճառների և դրանց վերացմանն ուղղված ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ:
- Նախադպրոցական հաստատությունների, հասարակական շենքերի և քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների կառուցման ու վերակառուցման դեպքում՝ դրանց շահագործման ու պահպանման ծախսերը համայնքային բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու համար անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք:
- «Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում», «Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում», ծրագրերի դեպքում 5% -ով ավելացել է կառավարության կողմից տրամադրվող համաֆինանսավորման չափը:
- Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/վերակառուցում, հիմնանորոգումը սալարկման և խճապատման միջոցով տարանջատվել է երկու մասի՝ բնական քարով (այդ թվում՝ չմշակված) և բետոնե սալիկներով, ընդ որում՝ կառավարությունը 30%-ով ավելի է համաֆինանսավորում այն ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվում է բնական քար:
- «Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում» և «Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում» ծրագրերի շրջանակներում կարող են նաև ձեռքբերել համապատասխան գույք և կահավորանք:
- Աղբահանության ծառայությունների մատուցման համար մեքենասարքավորումների, տեխնիկայի և աղբամանների ձեռքբերման դեպքում՝ կառավարությունը 5-ից 15 տոկոսով ավելացրել է իր համաֆինանսավորման չափը:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի

զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Կարեն Բաղիշյան